

ՏԵՂԱՅԻՆ ՍԵՄԻՆԱՐՆԵՐ

- ✓ 2007թ. նոյեմբերի 2-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար Ա. Հայրապետյանը մասնակցել է ք. Երևանում կայացած Քաղաքացիական ծառայության մրցույթների և ատեստավորման քննությունների մոնիթորինգի վերջնական զեկույցի շնորհանդեսին,
- ✓ 2007թ. նոյեմբերի 5-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար Ա. Հայրապետյանը և ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա. Սաֆյանը մասնակցել են ք. Երևանում կայացած Եվրոպական Միության վերապատրաստման դասընթացի արդյունքների վերլուծության, ինչպես նաև այդ ուղղությամբ նախաձեռնվելիք հետագա քայլերը քննարկելու նպատակով փակ աշխատաժողովին,
- ✓ 2007թ. նոյեմբերի 8-ին հոկտեմբերի 19-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Աշխատաշուկայի ուսումնասիրություն գյուղական համայնքներում» թեմայով սեմինարին,
- ✓ 2007թ. նոյեմբերի 9-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա. Սաֆյանը և առաջին բաժնի պետ Ս. Ղարիբյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Կանանց նկատմամբ ընտանեկան բռնության իրավիճակը Հայաստանում» թեմայով սեմինարին,
- ✓ 2007թ. նոյեմբերի 14-ին ՀՀ ՎՊԽ անդամ Յու. Պողոսյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «ՄԱԿ-ի կլիմայի փոփոխության շրջանային կոնվենցիայի ներքո Հայաստանի երկրորդ ազգային զեկույցի մշակման ընթացքը» թեմայով սեմինարին,
- ✓ 2007թ. նոյեմբերի 15-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի առաջին կարգի մասնագետ Ա. Նազարյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Կանանց քաղաքական մասնակցությունը 2007 թ. խորհրդարանական ընտրություններին» հետազոտության արդյունքների ներկայացմանը,
- ✓ 2007թ. նոյեմբերի 18-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա. Սաֆյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Եվրոպական Միությունը 50 տարեկան է: Ինտեգրացման գործընթացը ԵՀՔ տարածաշրջանում. TACIS-ից դեպի Եվրոպական հարևանության և գործընկերության գործիք» թեմայով համաժողովին,

- ✓ 2007թ. նոյեմբերի 21-ին ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Շաբոյանը և ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա. Սաֆյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Եվրոպական ինտեգրման գրադարան» գրքաշարի տասներորդ` «Եվրամիության միասնական շուկա. ֆինանսական ծառայություններ» գրքի շնորհանդեսին,
- ✓ 2007թ. նոյեմբերի 23-ին ՀՀ ՎՊԽ անդամ Գ. Անանյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսության և գյուղական վայրերի զարգացման վարչական կարողությունների գնահատման» վերաբերյալ հաշվետվության քննարկմանը նվիրված փակ աշխատաժողովին,
- ✓ 2007թ. նոյեմբերի 23-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը և նույն բաժնի գլխավոր մասնագետ Ս. Հունանյանը մասնակցել են ք. Երևանում կայացած « Հայաստանի Հանրապետությունում աշխատող երեխաների իրավիճակի ուսումնասիրությունը» թեմայով հանդիպում-քննարկմանը,
- ✓ 2007թ. նոյեմբերի 26-28-ը ՀՀ ՎՊԽ անդամ Յու. Պողոսյանը և ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա. Սաֆյանը մասնակցել են ք. Ծաղկաձորում կայացած «ՀՉՆ-ների տեղակայնացումը` համայնքային ղեկավարների դերը և տարանջատված տվյալների օգտագործումը համայնքային զարգացման համար» թեմայով սեմինարին,
- ✓ 2007թ. նոյեմբերի 27-ին ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Շաբոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Գ. Մարտիրոսովան և ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի պետ Ա. Պետրոսյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Միգրանտների փոխանցումներ - աղքատություն» և «Փոխանցումներ – ֆինանսական հատված» ազգային զեկույցների նախագծերի քննարկմանը նվիրված սեմինարին,
- ✓ 2007թ. նոյեմբերի 27-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի գլխավոր մասնագետ Ա. Կարապետյանը մասնակցել է ք. Երևանում կայացած Twining նախագծին առընչվող աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2007թ. նոյեմբերի 28-ին ՀՀ ՎՊԽ անդամ Գ. Գևորգյանը և ՀՀ ԱՎԾ աշխատակազմի սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն. Բաղդասարյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Մարդկային զարգացման զեկույց 2007/2008» թեմայով սեմինարին,

- ✓ 2007թ. նոյեմբերի 28-ից դեկտեմբերի 1-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի գլխավոր մասնագետ Ա. Կարապետյանը մասնակցել է ՀՀ Լոռու մարզում կայացած «Կանանց նկատմամբ բռնության կանխարգելում. տեղեկատվության տարածում և պարտականությունների ու լիազորությունների սահմանում» թեմայով սեմինարին,
- ✓ 2007թ. դեկտեմբերի 3-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն. Բաղդասարյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Հարավային Կովկասում թմրամիջոցների հակազդման ծրագիր» թեմայով սեմինարին,
- ✓ 2007թ. դեկտեմբերի 5-ին ՀՀ ՎՊԽ անդամ Գ. Անանյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Տարածաշրջանային զարգացման հայեցակարգի (ռազմավարության) վերլուծական նյութեր և ուրվագծեր» թեմայով հաշվետվության քննարկման նպատակով փակ աշխատաժողովին,
- ✓ 2007թ. դեկտեմբերի 12-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն. Բաղդասարյանը և աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության առաջին ազգային զեկույցի վերաբերյալ Սոցիալական իրավունքի եվրոպական կոմիտեի մեկնաբանությունները» թեմայով սեմինար-քննարկմանը,
- ✓ 2007թ. դեկտեմբերի 12-ին ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Շաբոյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Տեղական ինքնակառավարման բարեփոխումները Հայաստանում» թեմայով կոնֆերանսին,
- ✓ 2007թ. դեկտեմբերի 14-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա. Սաֆյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Ինստիտուցիոնալ իրավիճակի գնահատումը զարգացման օժանդակության կողորդինացման բնագավառում» հաշվետվության քննարկմանը նվիրված փակ աշխատաժողովին,
- ✓ 2007թ. դեկտեմբերի 18-ին ՀՀ ՎՊԽ անդամ Գ. Գևորգյանը և ՀՀ ԱՎԾ աշխատակազմի աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Աշխատաշուկայի միտումներն ու մարտահրավերները Հայաստանում» թեմայով համաժողովին,

- ✓ 2007թ. դեկտեմբերի 18-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Տվյալների կիրառման մեթոդները Օնտարիոյում և ռիսկերի վրա հիմնված վերլուծությունը» թեմայով սեմինարին,

- ✓ 2007թ. դեկտեմբերի 20-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը և վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի արտաքին պարտքի վիճակագրության գծով փորձագետ Ռ. Հովհաննիսյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Ժողովրդագրական, սոցիալական և տնտեսական ցուցանիշներն ու դրանց զարգացման միտումները որպես մարտահրավեր ՀՀ միգրացիոն քաղաքականությանը» թեմայով կլոր սեղանի քննարկմանը: